ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» փետրվարի 2016 թվականի N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 18-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | | | |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 1 ՈՐՈՇՄԱՄԲ

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 18-ի թիվ 1 նիստի

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N91-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջատար մասնագետ Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» փետրվարի 2016 թվականի N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N2 ՈՐՈՇՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ

| Հ/Հ | ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ |
|---|---|
| 1 | 2016 թվական, փետրվարի 18 |
| 2 | 2016 թվական, ապրիլի 4 |
| 3 | 2016թվական, մայիսի 30 |
| 4 | 2016 թվական, հունիսի 27 |
| 5 | 2016 թվական, օգոստոսի 26 |
| 6 | 2016 թվական, հոկտեմբերի 20 |
| 7 | 2016 թվական, դեկտեմբերի 16 |

Առաջատար մասնագետ Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«18» փետրվարի 2016 թվականի N3-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N91-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 4421.0 հազար դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 91-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշմամբ հաստատված ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5112 (շենքերի և շինությունների կառուցում) ավելացնել 971.0 հազար դրամ:
   2) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) ավելացնել 1800.0 հազար դրամ:
   3) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5121 (տրանսպորտային սարքավորումներ) ավելացնել 400.0 հազար դրամ:
   4) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5122 (վարչական սարքավորումներ) ավելացնել 300.0 հազար դրամ:

5) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5221 (նյութեր և պարագաներ) ավելացնել 950.0 հազար դրամ:

6) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4213 (կոմունալ ծառայություններ) նախահաշվով նախատեսված ժամանակացույցի մեջ հուլիս ամսվա համար նախատեսված 300.0 հազար դրամից 200.0 դրամը տեղափոխել փետրվար ամիս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
| --- | --- | --- | --- |
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» փետրվարի 2016 թվականի N 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով և հաշվի առնելով գույքագրող հանձնաժողովի կողմից կազմված ակտերի օրինականությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի սեփականության 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | | | |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N4 ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Առ 11.12.2015թ. դրությամբ

1) Մուսալեռի գյուղապետարանի ապրանքանյութական արժեքները կազմում են 114 257 996 (հարյուր տասնչորս միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ ներառյալ շենք-շինությունները:
2) Մուսալեռի գրադարանի ապրանքանյութական արժեքները կազմում են 214 567 (երկու հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ:
3) Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ապրանքանյութական արժեքները կազմում են 10 239 063 (տասը միլիոն երկու հարյուր երեսունինը հազար վաթսուներեք) ՀՀ դրամ:
4) Մուսալեռի գյուղապետարանի հաշվեկշռից դուրս է գրվել 260 969 (երկու հարյուր վաթսուն հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ:

Առաջատար մասնագետ Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» փետրվարի 2016 թվականի N 5-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի երկրորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 5 Ն ՈՐՈՇՄԱՄԲ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի 2015 թվականի եկամուտների և ծախսերի կատարման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի կողմից ներկայացված հաստատված բյուջեների համաձայն՝ 2015 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 5546.1 հազար դրամ, եկամուտներ է նախատեսվել 59350.7 հազար դրամ, որից վարչական բյուջեով՝ 53921.5 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեով՝ 5429.2 հազար դրամ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ վարչական բյուջեն եկամուտների մասով կատարվել է 98.5 % կամ պլանով նախատեսված 53921.5 հազար դրամի դիմաց կատարվել է 53111.2 հազար դրամ, այդ թվում սեփական եկամուտների գծով 18004.9 հազար դրամի դիմաց կատարվել է 17194.6 հազար դրամ, իսկ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի գծով՝ 35916.6 հազար դրամ:

### Սեփական եկամուտներ

Հողի հարկից եկամուտ է նախատեսվել 6100.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 5801.0 հազար դրամ (95.1 %):

Գույքահարկի գծով նախատեսվել է 10400.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 10111.1 հազար դրամ (97.2%):

Ընդամենը տեղական տուրքեր է նախատեսվել 455.5 հազար դրամ, փաստացի գանձվել է 457.2 հազար դրամ (100.4 %):

Ոչ հարկային եկամուտներ համարվող հողերի վարձակալության վարձավճարներ է նախատեսվել 300.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 166.7 հազար դրամ (55.5 %):

Տեղական վճարներ է նախատեսվել 615.0 հազար դրամ փաստացի գանձվել է 524.2 հազար դրամ (85.2 %):

Համայնքի սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքեր են նախատեսվել 429.2 հազար դրամ, փաստացի գանձվել է 429.2 հազար դրամ:
Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 5546.1 հազար դրամ:

Ծախսեր

Մուսալեռի գյուղապետարանի 2015 թվականի բյուջեով ծախս է նախատեսվել.

վարչական մասով 53921.5 հազար դրամ, փաստացի ծախսվել է 50336.3 հազար դրամ, իսկ ֆոնդային մասով նախատեսվել է 10975.3 հազար դրամ փաստացի ծախսվել է 9329.3 հազար դրամ:
Վարչական բյուջեով աշխատավարձի և հավելավճարներ հոդվածներով ծախս է նախատեսվել 22015.4 հազար դրամ, փաստացի ծախսվել է 21006.2 հազար դրամ (95.4 %):
Սոցիալական նպաստներ (սոցիալական օգնություն) է նախատեսվել 4000.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 3994.0 հազար դրամ (99.8 %):
Այլ մշակութային միջոցառումների համար նախատեսվել է 45.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 45.0 հազար դրամ (100 %):
Համայնքի աղբահանման, կոմունալ ծառայության ծախսեր է նախատեսվել 2780.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2754.0 հազար դրամ (99.1 %):
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման և այլ ծախսերի համար ծախս է նախատեսվել 23703.1 հազար դրամ, փաստացի ծախսվել է 22478.1 հազար դրամ (94.8 %):
Պահուստային ֆոնդ նախատեսվել է 1300.0 հազար դրամ:
Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 10975.3 հազար դրամ, փաստացի ծախսվել է 9329.3 հազար դրամ (85.0 %):
Շենքերի և շինությունների կառուցում հոդվածով նախատեսվել է 6046.1 հազար դրամ, փաստացի ծախսվել է 544.4 հազար դրամ (83.4 %):

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով նախատեսվել է 2529.2 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2524.4 հազար դրամ (95.8 %):

Վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսեր է նախատեսվել է 2000.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1510.5 հազար դրամ (75.5 %):

Նախագծահետազոտական ծախսեր է նախատեսվել 250.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 250.0 հազար դրամ:

Այլ ակտիվների ձեռքբերման ծախսը նախատեսվել է 150.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 0.0 հազար դրամ:

Առաջատար մասնագետ Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» փետրվարի 2016 թվականի N 6

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականիփետրվարի 10-ի N9 որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 10-ի N9 որոշման առաջին, երկրորդ, երրորդ կետերով սահմանված դրամական օգնության գումարը, որը ֆինանսական սղության պատճառով չի տրամադրվել 2015 թվականին, թույլատրելու տրամադրել 2016 թվականին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | --------------- | --------------- | --------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» փետրվարի 2016 թվականի N 7

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքում 2016 թվականին ծնված յուրաքանչյուր երեխայի համար հուշագիր գնելու նպատակով տրամադրել 5000 դրամ և տալ դրամական օգնություն՝ 30 000 դրամ (պարտադիր համայնքում բնակվելու և ծնողներից որևէ մեկի գրանցման առկայության դեպքում):
2. 2016 թվականի ընթացքում համայնքի բոլոր զորացրվող բնակիչներին տրամադրել 20 000 դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի բնակչի մահվան դեպքում նրա ընտանիքին տալ 50 000 դրամ; Առանձին ծայրահեղ դեպքերում համայնքի ավագանու որոշմամբ կարող է տրամադրվել այլ չափի գումար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | | | |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՋՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» փետրվարի 2015 թվականի N 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16-րդ հոդվածի առաջին մասի 19.1 կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արծակման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N8 ՈՐՈՇՄԱՆ

# ՍԽԵՄԱ
# ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

| ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ | ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ |
|---|---|
| Համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը | Յուրաքանչյուր տարի մոտ 400մ$^3$ |
| Սանիտարական մաքրման ենթակա տարածքներ | Համայնքի բոլոր բնակելի փողոցները |
| Սանիտարական մաքրման աշխատանքների ծավալներ | Պարտադիր և պարբերաբար իրականացնել աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ: Աղբահանության աշխատանքները կազմակերպել շաբաթը մեկ անգամ: |
| Աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները | Կենցաղային և ոչ կենցաղային աղբը հավաքվում և տեղափոխվում է համայնքից: Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը: Սանիտարական մաքրման աշխատանքները և աղբի տեղափոխումը աղբավայր իրականացնել շաբաթը մեկ անգամ: |
| Անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջներ | Գազ 53 մակնիշի մեքենա |
| Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության և սանիտարական մքարման աշխատանքների ֆինանսավորումը | Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը իրականացվում է համայնքի բյուջեից առանձին ծախսային ծրագրով: |

Առաջատար մասնագետ Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18 » փետրվարի 2016 թվականի N 9

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի թվով 3 բնակչի՝ բուժման նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ֆինանսապես անապահով թվով 2 բնակչի՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՉՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18- Ի N 9 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

| Հ/Հ | Գումար ստացողի անուն, ազգանուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | Սամսոնյան Սուսաննա Վոլոդյայի | 40 000 |
| 2 | Գևորգյան Հարություն Գևորգի | 20 000 |
| 3 | Քերիմյան Նորիկ Սեդրակի | 40 000 |

ՑՈՒՑԱԿ

ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

| Հ/Հ | Գումար ստացողի անուն, ազգանուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | Թովմասյան Անդրանիկ Թովմասի | 30 000 |
| 2 | Թովմասյան Հմայակ Ներսեսի | 20 000 |

Առաջատար մասնագետ Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» փետրվարի 2016 թվականի N 10

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի Մ. Մաշտոց, Շառլ-Տիրան Թեքեյան և Ֆր. Վերֆել փողոցների հունվար ամսվա ձյան մաքրման կատարված աշխատանքների համար տրամադրել 67 500 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (6) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | | | |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ